

1890

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏԱՐ ԻՐ

ՄԱՐՏ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

ԱՇԽԱՐՀԱՐԱՐԸ

ԳՐԱԲԱՐԻ ԶԵՌ-ԳՈՎ, ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԵՒ ԿԱՆՈՆԱԻՈՐԵԼՈՒ

ԵՒ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ ՄԷՋ ԿԵՆԴԱՆԱՑՆԵԼՈՒ ԽՆԴԻՐՆ



ՍԱՅԿԱՆ, այն վսեմ և գեղեցիկ բարբառն՝ որով իբրև ոսկեղինիկ զօգիւ, ըստ հինաւուրց պերճախօսի մի, մեր յաւէտ յիշատակաց արժանի թարգմանիչք Վան տարն տարրացուցին և զաննիւթ զաղափարս'ի նիւթ յեռեցին », արգէն ութերորդ դարէն 'ի վեր սկսած էր օտարասեռ տարերաց ազգեցութեան ներքե ժանդոտիլ և հետզհետէ կորսնցնել իւր նախկին փայլը, Սակայն և այնպէս՝ թէ գերութեան երկաթեայ շղթայի տակ հեծող և յօտար աշխարհս թափառող Հայուն ծանրութիւնը մեղմացնողն, և թէ իւր հայրենեաց երանաւէտ վայրերն և երջանիկ օրերը վայելող ազգայնաց զոյութիւնն և ազգասիրական ոգին միշտ վառ պահողը՝ նա եղաւ . որովհետև նորա զօրեղ և գիւթիչ ազգեցութիւնը միայն նախնեաց քանի մի տասնեակ մագաղաթեայ թերթերու մէջ ամփոփուած չէր, ինչպէս կ'երևի զըժ. բաղդօրէն այսօր. այլ զոգցես իմն անբաժանելի կերպով անձնաւորուած էր իւրաքանչիւր հայ բերանի և սրտի մէջ. մանաւանդ թէ օտարասեռ ազգերէ շրջապատուած և հարստահարուած հայութեան

յայտարար կնիքը՝ նա էր։ Այնպէս որ, ուր Հայոց բաղդին թնամի ձեռքն յաջողեցաւ խառնակել և խանգարել զայն, խանգարեցան վաղընդփոյթ և ցրուեցան ի սփիւռս ազգաց նոյնպէս և Հայկայ զարմն և զաւակունքն։ Ո՛րքան տխուր օրեր, քանի՜ ողբերգական տեսարաններ, զորս յայտնած է մեզ պատմութիւնն, և զորս կը ծածկէ տալաւին խորհրդաւոր քօղի ներքեւ։ Սակայն մայրենի լեզուին հզօր ազդեցութեանն, ազգի մի կամ միաժողով ընկերութեան գոյութիւնն և միութիւնը պահպանելու մասին, ամենէն աւելի շօշափելի և աներկբայելի ապացոյցը տուած է ՚ի վաղուց Քամայ կամ քուշեան ցեղի նախկին միաբանութեան պատմութիւնը գրող՝ անսուտ հեղինակն (Ծննդ. զլ. ԺԱ.)։ Հէն արդարեւ կը տեսնենք իբր ՚ի հայեւոյ, թէ ցորչափ մի և նոյն մայրենի լեզուն կը տիրէ նոցա և կը համախմբէ ՚ի մի, այնքան զօրաւոր են և իիզախ յոր և է դժուարին ձեռնարկս, որք կը յաւակնին անգամ մինչև յերկինս բարձրացնել իրենց զօրութեան և գործունէութեան երկնաբերձ կոթողն և բարձրանալ, Սակայն երբ կը կորսուի ընկերութեան զօղիչ և չնայսարհիկ այդ պարգէն, անդէն և անդ կը կորսնցնեն և նոքա իրենց համաշունչ միութիւնը, հուսկ ուրեմն կը քայքային և կը ցրուին։ այնպէս որ նոցա նախածին լեզուին հետ միասին ընտանեկան և ցեղական միութիւնն և շուտով կ'անհետանայ և կը կորսնցնէ իւր նշանակութիւնն. իսկ սեմական ցեղն, ընդհակառակէ, պահելով իւր յատուկ լեզուն՝ կը բարգաւաճի դարուց ՚ի դարս և կ'ընդարձակէ ամենուրեք իւր վրաններն։

Արդ այս նախկին խառնակութենէս դուրս, երկրորդ խառնակութիւն մ'աւ և՛ աւանդէ մեզ մարդկային ազգի պատմութիւնը, զոր մենք հասարակաց բարբառով Միջին դար կ'անուանեմք։ Այս կապարեայ դարուս մէջ բազմապիսի աղիտից և յետաձնացութեան պատճառաւ, տգիտութիւնն իւր խաւարասէր ձեռքով՝ ընդհանուր գիտութեանց և արուեստից հետ՝ դասակարգ լեզուաց ևս մահացու հարուած պատճառեց. որովհետեւ այս ժամանակս Ասպետոքեան ընդհանուր ձկտումը՝ բարձի թողի առնելով ո՛ր և է մտաւորական յառաջխաղացութիւն և գեղեցիկ դպրութիւն, զինուց և զրահից շառաչելն միայն ամենուրեք կը լսեցնէր։ Ուստի բազմախնդիր ազգեր և աւաւտական հասարակութիւնք մէկ կողմէն եսականութեան և ինքնապահպանութեան ոգիէն մղուած՝ բազմապիսի և նախանձընդդէմ իշխանութեանց և բռնակալութեանց բաժանուեցան. իսկ միւս կողմէն՝ պատերազմաց և ընչաքաղցութեան ցանկութեամբ բորբոքուած՝ սկսան հեռաւոր յարաբերութիւններ և պայմաններ ստեղծել. այնպէս որ, կարելի է ասել, թէ երկու պարագայից մէջ իսկ՝ դասական լատիներէնն յԱրեւմուտս, իսկ հին յունարէնն և հայերէնն յԱրեւելս ռամկօրէնի վերածեցան, գոզցես իմն համակերպուելով ռամկավար ժողովրդաց պահանջմանը։ Եւ ստուգիւ այդ ժամանակամիջոցին

աւմիկ և գրագէտ դասերն՝ գրեթէ 'ի միում համարի էին, գէթ գրա-
գիտութեան մասին, իսկ յայն ամենայնի՝ երկաքանչիւր կողման մը.
տայ և սրտի որոշիչ բնագործն էր՝ Վիպաւանական կոչուած սէրն
և զին... շորակակն պատիշտը:

Բայց աստ իմ նպատակս չէ լեզուաց անկման պատմութիւնն ընել,
այլ ցուցանել միայն, թէ այն հինաւուրց բուններէն վերննձիւղեալ
շառաւիղներն, այսինքն է, թէ արևմտեան և թէ արևելեան նորա-
խայծ լեզուներն, թէպէտ և տարբեր յիւրեանց մայրենի բնոյն, թէ-
պէտ և օտարասեռ տարբերք պատուաստեալ, սակայն հանդերձ
պստ՝ ընթացս դարուց դարձեալ առաջնոց հիւթովը կը սնանէին
և կը պահէին իրենց առանձնական գոյութիւնը, ցորպի գիտութիւնը
և արուեստը՝ մերթ ընտանի պատերազմաց և մերթ միջնադարեան
ուրիշ բիւր ապականութեանց զոհ եղած էին: Այն ժամանակ միայն
սկսան ինքնուրոյն լինել և իրենց նախածնողքն 'ի մահ դատապար-
տելու ձկտիլ. երկրորդ անգամ, երբ գիտութեան լոյսը վերստին
ծագեցաւ, բոլորովին տարբեր կերպով, և միջնադարեան խաւարը
փարատեց, և նոր զարի մ'ես տալով ազգաց մտաւորական և քա-
ղաքային յառաջադիմութեան՝ լեզուական գանձերն ևս բազմացոյց:
Եւ այսպիսի մի եղելութեան ստուգութիւնը կը հաւաստեն մէկ կող-
մէն միջին դարու, իսկ միւս կողմէն այլ ժՁ և ժէ դարուց գրութիւն-
ներն, զորս եթէ աչքէ անցուցել ենք, իտալական և գաղղիական
բարբառներն, զորս կարեմք յիշել իբրև օրինակ արևմտեան նոր լե-
զուաց կազմութեան, ըստ մեծի մասին լատիններէնի տարերացմէ
բաղկացեալ էին մինչև ցժէ դար. մանաւանդ թէ աւելի լատինե-
րն ձոտ էին՝ քան թէ այժմեան իտալերենին և գաղղիերենին:

Սոյն երևոյթս կը տեսնուի նաև յ'ժԲ և յ'ժԳ դարուց մէջ կազմա-
կերպեալ մեր աշխարհիկ բարբառոյն վրայ, որուն գոյութիւնը կը
ներկայացնէ մեզ, ամենէն աւելի զգալի կերպով, Մխիթար Գօշի Դա-
ւաւտանագրոց՝ Սմբատայ ձեռքով կատարուած գեղեցիկ լծարգմա-
նութիւնն, որուն համար կարելի է ասել, թէ այնքան կը տարբերի իւր
ժամանակակից գրաբարէն, որքան կը տարբերին մեզի հասած
Գողթան երգերն, կամ լաւ ևս, նոյն գաւառի մէջ է դարում խօ-
սուած գաւառաբարբառն՝ այլարատեան գաւառաբարբառէն, կամ
որ նոյն է, դասական լեզուէն: Ոսկայն ճրքան տարբեր եղած են ի-
րարմէ նոցա ծագման և կազմութեան հանգամանքներն: Արդ, է
դարում խօսուած գաւառաբարբառոյն ծագումն առողք՝ եղել էր
արդէն հայ ժողովուրդն, առանց մատենագրութեան ազդեցութեան:
Յայտմ միայն կը ճշմարտայն այն բանասիրաց կարծիքն, որոնք զժողո-
վուրդն՝ և ոչ թէ նորա գրագէտ մասը կը համարին նախկին հնդի-
նակ և կազմիլ լեզուին. և թէ մեր ոսկեղինիկ դարու գրաբարը՝ գա-
ւառականէ մի՛ կամ աշխարհօրէն խօսուած լեզուէ մի յառաջ եկած

է, իսկ յիշեալ դարուց ռամկօրէնն, ընդ հակառակն, ժամանակա-
կից գրաբարէն միայն կարող էր կազմել և իրօք կազմեցաւ, ըստ
իս. Այս բանիս ապացոյց համարելու ենք, բայց 'ի այն ժամանա-
կին յատուկ գրաբարի հետ ունեցած մերձաւորութենէն, դիտելու
է որ նախ այդ աշխարհաբարը մեծապէս կը տարբերի թէ Ե դա-
րու գաւառականներէն և թէ այժմեան խօսուածներէն. ուստի
չկարէ ոչ առաջնոց իւր անմիջական շառաւիղ համարուիլ և ոչ իսկ
վերջիններուս՝ իբրև արմատ: Բ. Դիտելու է, որ Ե և նորա յաջորդ-
դարուց մէջ՝ դպրութեան ձեռքով գրաբարին կարգէ դուրս դար-
գանալովն և ընդհանրանալովն՝ այն հինաւուրց գաւառաբարբառները
գրեթէ կորուսել էին իրենց նախկին առանձնայատկութիւնքը, գու-
ցէ թէ և գործածականութիւնը:

Սակայն աստ թէ՛ գրաբարեանց և թէ՛ մեզ ամենուս համար հետա-
քըքրական կէտն այս է, եթէ ստուգիւ յ'ԺԲ և յ'ԺԳ դարերում՝ ար-
դէն աշխարհաբարը կազմուած էր, և հայ բերանոյն և մտաց թարգ-
մանը նա էր, ինչպէս համար ուրեմն այդ ժամանակամիջոցին հազիւ
թէ մի կամ երկու ամսօղական գրուած ձեռքերնիս հասած է. իսկ
միւսներն առ հասարակ՝ գրաբար լեզուով մեզ կը ներկայանան. մինչ-
դեռ այսօր՝ բոլորովին այդ երևութիւն հակառակը կը կատարուի:

Ժողովրդական լինելու այն բուռն և անհրաժեշտ պահանջն, որ
այսօր իսկ կը ստիպէ մեր արծուեթուիչ հանճարներն անգամ՝ թո-
ղու գրաբարի վսեմական և շինջ բարձրութիւնքն և իշնել 'ի ստորին
զաւառս աշխարհաբարին, զոյր անտարակոյս նաև այն ժամանակ. և
զայս՝ արդէն անուղղակի ցուցել են մեզ ոչ միայն գրաբարով եղած
գրուածոց հեղինակներն, աշխարհիկ բարբառոյն մերձաւոր և դիւ-
րալուր լեզու մի գործածելով և ստէպ ստէպ աշխարհաբար բացա-
տրութիւնս իսկ յեղյեղելով, այլ նոյն իսկ Գօշի գրուածն աշխարհա-
բարի գարձնողն՝ իւր յիշատակարանին մէջ յայտնապէս կը ծա-
նուցանէ զայն: Ուստի ուրիշ բանաւոր պատճառ մի որոնելու է այս
բանիս: Աստ՝ գրաբարի պաշտպան մէկը՝ կարէ ասել, թէ որովհետև
այդ ժամանակ իսկ գրաբարը միայն կ'ընդունէին Հայաստանեայք ի-
բրև ազգային, ազնուական և ամենայնի բաւականութիւն տուող
լեզու. իսկ աշխարհաբարն՝ համարուած էր իբրև ռամիկ, խառնածին
և անբաւական: իսկ Աշխարհաբարեանի մի կարծիքով վերոյիշեալ
երևոյթը զայս միայն կը ցուցանէ, թէ որովհետև մինչև այդ ժամանակ
մի նիւթական և իբր 'ի վաղուց ընդելացած սովորութիւն էր դարձել,
թէ հասկացողին և թէ՛ Հնասկացողի համար, գրաբար լեզուով մատե-
նագրել, ենթադրելով որ գրաբարն էր և միայն գրաբարը կարող
է իշնել մատենագրութեան լեզու:

Ահա Գրաբարեանց և Աշխարհաբարեանց ընդհարման առաջին
կէտը, ոյր վասն 'ի վաղուց հետէ կանգնեցան երկու հակակիր կու-

սակցութիւնը, և կը շարունակեն իրարու դէմ սկսած պայքարն, առանց կարենալու կրքեր համաձայնիլ իրարու պահանջմունքին. այնու զի առաջնոց կարծիքով, ինչպէս է դարում, այսպէս և այժմ և յապայտ պէտք է միշտ զգրաբարն ուսուցանել ամենուրեք, իբրև հայրենի բարբառ, մանաւանդ թէ գրաբարով գրել և ճառել. վասն զի նա միայն է բաւական որ և է ծանօթութեան կամ գաղափարի արտայայտիչ լինել. իսկ վերջնոց բռածին համաձայն՝ այդ հինաւուրց լեզուն՝ այժմ մեռած լեզուաց կարգը դասելի է. որովհետև կենդանի սերնդեան նորանոր ծանօթութիւնը՝ նոյնպէս նորահնար բառից և բացատրութեանց կը կարօտին. իսկ ընդհակառակն, այդ բառերը և բացատրութիւնը՝ չկարէ մատակարարել մեզ դասական լեզուն, ճիշդ այն առումը որով կը հասկանամք մեք այսօր:

Բայց այս ծայրայեղ կարծեացք երկու հակաբեւեռն ևս ֆիտասարեր են, ըստ իս: հասարակութեան և նոր լեզուներուն. որովհետև վերին յիշեալ կերպով անկարելի է գործադրել առաջինը՝ առանց անխնամ և անկատար թողլու զաշխարհաբարն իւր մանկական տիղջ մէջ: Անկարելի է գործադրել նաև վերջին կարծիքն, առանց սպանանելու զգասական լեզուն Հայոց. ի զուր կը գոչեն Գրաբարեանք, նմանցընելով զայն ծնանելու երկանց և կենաց վտանգի մէջ գտնուող մի մօր, որուն կեանքը փրկելու համար՝ հարկ է զոհել նորա ծնունդ աշխարհաբարը. ի զուր կը պատասխանեն և Աշխարհաբարեանք, թէ աշխարհաբարն եթէ ծնունդ իսկ համարինք գրաբարին, սակայն և այնպէս ի վաղուց արդէն ծնած է, և ունի իւր անկախ գոյութիւնն՝ առանց առաջնոյն պէտք ունենալու:

Արդ այս վերջին ձայնս՝ թէպէտ և ընդհանուր արձագանդ գտած է այսօր հայ հասարակութեան մէջ, թէպէտ և արդեամբք իսկ այնքան զօրացել է, որուն համար կարող ենք ասիլ, թէ Գրաբարեանց ձայնը խղճած է և իւր յաղթութեան գրօջն իսկ նոցա վերայ կանգնած. բայց նորա գատման և վարման եղանակն՝ ոչ է ուղիղ և օգտաբեր: Եւ յիրաւի, եթէ աշխարհաբարը գրաբարէն զատ ծնունդ ևս համարինք, սակայն դարձեալ միշտ ծնունդ է, և այնքան աւելի պէտք ունի գրաբարին, որքան նորածին մանուկն՝ իւր մօր ստեանց, ոչ միայն իւր կենսական գոյութիւնը պահպանելու, այլ զամ քան զգամ՝ զարդանալու համար՝ ցտիս այրականութեան: Գրաբարը՝ թէ և մեծապէս սիրելի է ինձ և յարգելի քան զաշխարհաբարը, սակայն վերջնոյս կարեւորութիւնն անհրաժեշտ հարկ մի է՝ ապրող հասարակութեան պահանջը լեցնելու համար: Բայց պէտք չէ մոռնալ և այս, թէ աշխարհաբարն անգոր է և անբաւական գրականութեան լեզու լինելէ, եթէ դասական հայերէնը չափով մի անոր ձեռք չկարկառէ. ուստի վախնանք, որ գրաբարն իսպառ ի մահ հաստապարտած ժամանակ, աշխարհաբարն ևս իւր մօրէն որբացուցած և ի մահ հաստապարտած

կը լինինք : Եւ յիրաւի գրականութիւնը կը պահանջէ, որ այն յօգու-
տոր բարբառն՝ որուն ձեռքով նա. կերպով մի պիտի յաւերժանայ
ապագայից համար, լինի հաստատուն և կանոնաւոր. որովհետեւ ինչ-
պէս ամբողջ հասարակութիւնն՝ այսպէս ևս նորա մէջ ապրող կին-
դանի անհատները՝ շատ անգամ խօսքով չհասկացած կամ չհաս-
կանալի գաղափարները՝ ձայնով և նշանացի ձեւերով իսկ կարող
են հասկանալ և հասկացնել, իսկ անցելոյն մէջ այսպէս չէ. որովհետեւ
խօսքը միայն մնացել է, իսկ գրողն անցել է. ուստի այդ խօսքը կամ
գիրն՝ եթէ կանոնաւոր լեզուով գրողմուած չէ, այնուհետեւ կամ
անհասկանալի կը մնայ և կամ այնքան իմաստ կ'ունենայ՝ որքան
են ընթերցողք : Յայսմ իսկ՝ ակներև կը տեսնուի գրաբարին մեզի
մատուցած նպաստից գերազանցութիւնը : Ուրեմն այս կէտիս մէջ
նկատելով խնդիրն, կարեմ ասել, թէ ես կարծեօք թէ և աշխարհա-
բարի գործադրութեան պաշտպան, սակայն և այնպէս դասական
լեզուին գէթ ուսումը տակաւին անհրաժեշտ մի բան կը համարիմ.
ահաւասիկ իմ բանաւոր պատճառներս :

Արդ, ինչպէս ըսուեցաւ, արդի գրականութեան համար գործա-
ծուած աշխարհաբարն այն կէտէն սկսած է իւր ծագումն, ուր նախ-
նեաց գրաբարն՝ իւր յետամնացութեան և խանգարման վերջին աս-
տիճանին գրեթէ հասած էր. ուստի հետևաբար այս վերջինս՝ իւր
նախորդէն, որուն աւերածներովը կազմուեցաւ յ' ԺԿ դարուն, աւելի
կատարեալ չէր կարող լինել, գէթ մի և նոյն ժամանակը. իսկ թէ
յաջորդ դարուց մէջ՝ կարաց արդեօք հասնել այն կատարելութեանը,
զոր կը պահանջէր այդ կենդանի բարբառն, պահելով իւր հայկական
բնագրոյն, եթէ ոչ. այդ կենդանի բարբառը կ'ըսեմ, որ մէկ կողմէն
ձեռնտու ունէր իրեն՝ կենդանի սերունդն, իսկ միւս կողմէն այլ
ստանալիք անթիւ շարք մի գաղափարաց : Ստիպուած եմ ըսել, թէ
մինչև ցայսօր ոչ միայն դեռ լիովին հասած չէ այն պահանջելի կա-
տարելութեան, որովհետեւ այն ժամանակէն մինչև ցկէս ԺԹ դարուն
զուրկ մնաց զինքը կենդանացնող և բարգաւաճող սերնդեան զոր-
ծունէութենէն, և այդ կարծեցեալ գաղափարներէն, այլ և նորա
մէջ սպորդեցին այլախզու ազգաց անթիւ օտարաբանութիւններ և
ձեւեր, որոնք օտար էին բոլորովին մեր նախնի հայերենէն. այնպէս
որ ԺԹ դարու կիսուն՝ մեր աւաղելի աշխարհաբարն, ըստ մեծի մա-
սին, թաթարերենի և մասամբ այլ Մեծ և փոքր Հայոց դրացի ազ-
գաց խառնափնդորութեան այլանդակ կոյտ մի դարձել էր, առանց
այն կենդանարար ոգւոյն՝ որով կը շարժի այսօր. գործածած բառե-
րը՝ են անյատուկ. բացատրութեանց կերպն՝ ապիկար և տղայական,
որոց ներքև կարծէք թէ մեծամեծ հանճարք անգամ՝ ողայացել են
բունի : Բացէք իրենց սեւին մէջ գեղեցիկ երկու երկասիրութիւններ,
որոց մին է Հ. Մկր. Ազգերեանի Դեղ կնկնաց հոգեանունդ գիրքն, և

է ներկայացուցիչ արևմտեան աշխարհաբարին. իսկ միւսն է Սալար Նովայի երգոց հրատարակութիւնը, որ կը ներկայացնէ արևելեան Հայոց աշխարհաբարը, և կը համոզուիք վերոյիշեալ տխուր եղելութեանն: Նոյն ինքն հանճարեղն Արզուման, որ աշխարհաբար լեզուին առաջին զարգացնողներէն մին եղաւ Ռուսահայոց մէջ, ուզելով գրաբարի կապանքներէն արձակուիլ՝ յաճախ ուսւ, թաթար և պարսիկ շղթաներով կաշկանդած է իւր և հայ լեզուն: Բայց զարմանքն այն է, զի քառասուն տարի առաջ աշխարհաբարին ռահահորդ եղող հեղինակութեանց վերոյիշեալ թերութիւնքն՝ այժմու արագագիր դպիրներն և քաջավարժ սուրհանդակներն իսկ՝ գործած կը լինինք, երբ կը խղճեմք դեռ աշխարհաբարի անձուկ պարունակէն ոտնփոխ մ'անդին անցնիլ և դասական լեզուէն պատշաճ նպաստներ ընդունել: Մինչդեռ օտար բանից և բացատրութեանց թիւն՝ օր քան ջօր կ'անձի, և բողբոջողներ Տաղիւ թէ կը գտնուին: Արդ մինչև հիմայ ըսածնէս փորը 'ի շատէ տեսնուեցան աշխարհաբարի կարծեցեալ կատարելութեան սահմանը, յորում կը գտնուի այսօր. գիտենք փորը ինչ և մեր դասական լեզուին առաւելութիւններն, որոշ եզրակացութեան մի հասնելու համար:

Նախ դիտելու է, որ հայկական բարբառն՝ Արամէն ցերուանդեան Տիգրանն, և Տիգրանէն՝ ցվաղարշակ արդէն կազմուած էր, և իւր առանձնայատկութեամբ՝ զրակից արիական լեզուին հետ կը մըրցէր, թէպէտ և երբեմն երբեմն Հայաստանի հետ՝ ինքն ևս նորա ազդեցութեան ներքև կը զարգանայր: Սակայն նոր կենդանութիւն մ'ես առաւ այն օրէն 'ի վեր՝ երբ Պարթև-Արշակունի ընտանիքն՝ իւր թագաւորական Հալապոսքեան հետ ի միասին՝ լեզուական ևս տեղաց 'ի նմա. այնպէս որ այն ժամանակէն յետոյ՝ պարթևական լեզուն ձգաւ հայկական, և հայկականը՝ պարթևական: Այս կէտս թէ և քիչ ուսումնասիրուած է, սակայն իբրև աներկբայելի ճշմարտութիւն ընդունելի է. և յիրաւի, մեր լեզուին մէջ եղած բառերու մեծ մասն մի, զորս մենք զուտ հայկական կը համարինք՝ Պ. Դը Լազարը, Միւլլէր և այլք՝ պարթևական կ'անուանեն: Այսպէս կամ այնպէս՝ գիտելու ենք, որ 'ի գարուն վերջերն՝ այրարատեան բարբառը մատենագրութեան լեզու մի լինելու հարկաւոր յատկութիւններն արդէն ունէր: Սակայն այն յունարենի դպրոցներն և քնդեցիկ դպրութիւնը, զորս Տրդատ սկսաւ և նորա յաջորդները շարունակեցին մինչև ցՄեկենեան Հայոց վճռադատուհ, ըստ բաւականին աղնուացուցել էին հայ հանճարն և լեզուն՝ յունական չքնաղ երկասիրութեանց ընթերցանութեամբ և վսեմ գաղափարներով: Բայց այն բազմաթիւ բանից և ասութեանց սերմերն և ծաղիկունք, որք յընթացս գարուց անընդհատ կը սփռուէին հայկական հողին վրայ, շատ անգամ կը վրիպէին ցանկացած պտուղներն հասունացնելէն և մեր լեզուին ամ:

բարներուն մէջ շտեմարանելէն, դպրութիւն չունենալուն պատճառաւ. այլ մերթ, ծառէն ինկած տերեւոց նման, կամ շուտով կը խամրէին, և կամ կենդանի սերնդեան բերանի մէջ կարող էին միայն պահպանուիլ: Բայց այն օրէն 'ի վեր' երբ երկրորդ Կադմոսն Հայոց սուրբն Մշտոց՝ ընծայեց համօրէն հայութեան իւր յաւէտ յիշատակաց արժանի գիւտը, շատ և շատ տարբեր կերպարանք առաւ հայկական լեզուն և դպրութիւնը, քան ինչ որ էր յառաջ: Այդ ժամանակ՝ յունական սրբազան պերճախօսաց և հեթանոս հեղինակաց աւանանշանաւոր գործերուն թարգմանութեան միջոցով՝ հելլենական լեզուին բոլոր գանձերն ևս եկին և տարրացան հայերէն դպրութեան մէջ՝ նշանագրոց ձեռքով: Թէպէտ և այս նիւթիս վրայ լրջօրէն գրուած ուսումնասիրութիւն մի դեռ չերեցաւ մինչև ցայսօր, սակայն եղբուն թեան ճշմարտութիւնն՝ անտի իսկ յայտնի պիտի լինի, եթէ բաղդատուն իմաստոյքեալն և Ս. Բարսղի Յաղապս Վեցօրեայ արարչոյն թարգմանութիւնը՝ նախ իրենց բնագիրներուն և ապա Զգօնի ճառերուն և ուրիշ ասորերէն գործոց թարգմանութեանց հետ: Երբաւի պէտք է ըսել, թէ բոլորն ևս ոսկեղարեան բովէն ելած և մեր քաջարուեստ թարգմանչաց լեզուով յղկուած են. սակայն առաջնոց մէջ եղած այն հեշտալուր բառից և բայերու բարդութիւնքն, այն հակիրճ՝ բայց բազմամաստ ասութիւնքն, այն ճարտասանական ձևերն այլովք հանդերձ՝ ուղղակի միայն յունարենի սեփական արգասիք են. այսպէս նաև չարք մի եկեղեցական և կրօնական բառից և կամ անուանակոչութեանց, զորս յայտնապէս յունարենէ ժառանգած է հայ լեզուն:

Բաց աստի՝ պէտք է նկատել նաև ուրիշ հանգամանքներ, որոնք մեծապէս նպաստեցին թէ կազմակերպութեան և թէ հարստութեան մեր դասական հայերենին: Երբաւի դիտելու ենք, որ այդ լեզուն իւր կատարելութեան վերջին աստիճանին հասաւ ճիշդ այն ժամանակ, յորում զոյգ ընդ թաղաւորական իշխանութեան՝ հայրապետականն իսկ՝ դեռ իւր փառաց և փայլման մէջ էր. զինուորական պերճութեանց հետ ի միասին՝ եկեղեցականն ևս կը փայլէր բազմակողմեան բարեկարգութիւններով և ծիսակատարութեամբ. միով բանիւ, այն ժամանակ՝ երբ երաժշտութիւն, բանաստեղծութիւն, երկրագործութիւն և գեղեցիկ արուեստք իրենց պարզացման մէջ էին և հայ հանճարը՝ դեռ զինքը յետոյ ուրեմն կաշկանդող շղթաներէն ազատ էր. երբ դեռ ոչ ստրկութեան լուծն և ոչ օտարին բարոյական և լեզուական ապականութիւնները՝ հայուն սիրտն և լեզուն թռնաւորած չէին: Այսպէս ուրեմն, ինչպէս պերիկլեան դարուն՝ ատտիկեան լեզուն և դպրութիւնն, և լուդուիկեան դարուն՝ գաղղիերէնն, այսպէս նաև վառամշակոյ կամ Հայոց ոսկեղարուն՝ հայկական դպրութիւնն իւր զարգացման գրեթէ զազաթնակէտն հասաւ. որովհետև

վերոյիշեալ բոլոր հանգամանքները կը զուգընթացային հանգոյն ոսկեղէն բովուց և յորդ աղբերականց՝ ոչ միայն նորանոր գաղափարներ, այլ բառեր ևս ստեղծել՝ հայկական լեզուն արգասաւորելու և ծաղկեցնելու մասին, իրենց յատուկ երանգով, համով, հոտով և գեղով, որոնց այլ ևս դժուար է հասնիլ թող թէ գերազանցել զանոնք:

Արդ, մինչև հիմայ ըսածնիս ամփոփելով՝ այսպէս կ'եզրակացնենք. եթէ ստուգիւն աշխարհաբարն ինչպէս իշր ծագման ժամանակ՝ այսպէս և այսօր դեռ աղքատ է և անկերպարան. իսկ դասական գրութաբար՝ փարքաւ և քաջակազմ, ուրեմն հարկ է, որ առաջինը՝ վերջնայն ձեռքով կազմակերպութի և հարստանայ. եթէ դեռ մանկական տիոց մէջ է, հարկ է՝ որ իշր հիմնաւորքը մօր ստեղծարար սնանի. միով քանի, եթէ դեռ նորախայծ շառաւիղ մ'է, հարկ է որ իշր քննյն կենսաբեր հիշքովքն աձի և զարգանայ:

Հայութիւնն և հայ լեզուն՝ իւր զարգացման այն դարուն մէջ միայն պիտի կարենայ ինքզինքն անկարօտ համարել դասական լեզուին, երբ կարող լինի գերազանցել Ե դարը. այլ այս բանս թէ և կարելի՛ բայց դեռ շատ հեռի է: Ո՛րքան կը սխալին նոքա՝ որոնք կը կարծեն, թէ աղբէն իսկ այդպիսի դարու մի հասած են. և թէ գիտութեամբ և թէ եւրոպական լեզուաց կենդանի ազդեցութեամբ՝ կարող են լեցնել այն ամէն լեզուական պէտքերն, ինչպէս կը լեցնէին մեր նախնիք՝ հայկական բարբառոյն ձեռքով, և հարստացնել զայն և կատարելագործել: Այս, կարող են հարստացնել, բայց այն կերպով որով փորձեցին երբեմն հարստացնել Դաւիթ Անյաղթն և իւր համախոհը, և ոչ այնպէս՝ ինչպէս ըրին Եզնիկ, Սահակ և Մեսրոպ. որ աղագաւ մնացին անհասկանալի և պիտի մնան տակաւին, ի խրատ և ի յանդիմանութիւն մեր օտարամոլներուն, որք բնաւ չեն խղճեր օտար ազգաց գաղափարաց հետ ի միասին՝ ունենու և բացատրութիւնս օտարս, առանց իւրացուցիլ զօրութեան և հայացնելու՝ որոնք չեն միանար հայ լեզուին հետ, այլ կը մնան անմարտելի. այնպէս զի, եթէ յաճախեն քան զչափն՝ կարող է ապագային այդ աշխարհաբարն ևս ենթարկուիլ օտար ազդեցութեան, ինչպէս են թարկուեցան երբեմն սակէ տորբեր աշխարհաբարներս Յերաւի, այս բանիս համոզուելու համար՝ բաւական է կարդալ «Մուրճ» ի 1890 թուին հրատարակուած առաջին ամսաթերթի (առաջաբանն և նման ուրիշ յօդուածներ ևս այլուր, ուր «ամենախնտելիզէնտ» (ամենահասկացող) և այլ երկգլխեան ճիւղերը կը ստկացնեն զհայ լսելու. իսկ բացատրութիւններն աւելի գերմանական են՝ քան հայկական. — Լաւ կը լինէր, եթէ սոքա իրենց օտարերկրեայ գիտութեան հետ ի միասին՝ իրենց մայրենի լեզուն ևս լաւ կերպով ուսանելէն վերջ՝ ձեռք զարնէին այդպիսի խմբագրութեանց փափուկ պաշտօնին:

Շարունակելի

Հ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳՍԵԱՆ